

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՄԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Անցյալ կատարյալ ժամանակաձևը, ինչպես գրական պարսկերենում, Խորասանի բարբառում նա կազմվում է անցյալի հիմքին ավելացնելով անցյալ ժամանակի կազմության համար գործածվող դիմային վերջավորությունները:

Խորասանի բարբառի որոշ խոսվածքներում եզակի թվի երրորդ դեմքի բայն ունի զրո վերջավորություն և համընկնում է բայի անցյալի հիմքի հետ, սակայն որոշ խոսվածքներում անցյալի հիմքին ավելանում են -eg կամ -ek դիմային վերջավորությունները, իսկ որոշ խոսվածքների դեպքում նախածանցներ են ավելանում:

Սույն հոդվածում մենք քննության ենք ենթարկել Ֆերդոուսի, Թորբաթ-է Շեյդաբեի, Մաշհադի, Ղայենի և Քաշմարի խոսվածքների անցյալ կատարյալ ժամանակի կազմությունը, և այստեղ առկա հնչյունական և քերականական փոփոխությունները համեմատել գրական պարսկերենի հետ:

Ֆերդոուսի խոսվածքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության ժամանակ անցյալի հիմքին ավելանում է **be-** նախադասնիկը, սակայն որոշ բայերի անցյալ կատարյալ ժամանակը կազմվում է **var-** կամ **e-** նախածանցների հավելմամբ. այդ դեպքում բայի խոնարհումը տարբերվում է խոսվածքին հատուկ օրինաչափությունից¹:

	Պարսկերեն Ֆերդոուսի խոսվածք	հայերեն	Պարսկերեն Ֆերդոուսի խոսվածք	հայերեն
	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
1-ին դեմք	raftam→beraftom šenidam→ēšnudom goftam→vargoftom	գնացի լսեցի վերցրեցի	raftim→beraftam šenidim→ēšnudma goftim→vargoftam	գնացիևք լսեցիևք վերցրեցիևք
2-րդ դեմք	rafti→berafti šenidi→ēšnudet gofti→vargofti	գնացիր լսեցիր վերցրեցիր	raftid→berafta šenidid→ēšnuda goftid→vargofta	գնացիք լսեցիք վերցրեցիք
3-րդ դեմք	raft→beraft šenid→ēšnudeš	գնաց լսեց	raftand→beraftan šenidand→ēšniša	գնացին լսեցին

¹ Raqebi M. H., 1381(2002), Barresi va towsif-e guyeše Ferdows; Dānešgāh-e Ferdowsi Mašhad, p.84

goft→vargoft	վերցրեց	goftand→vargoftan	վերցրեցին
--------------	---------	-------------------	-----------

Ղայենի խոսվածքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության ժամանակ անցյալի հիմքին ավելանում է *bo-* նախամասնիկը²:

	Պարսկերեն Ղայենի խոսվածք	հայերեն	Պարսկերեն Ղայենի խոսվածք	հայերեն
	Եզակի թիվ		Հոգևակի թիվ	
1-ին ղեմք	foruxtam→bofruxtom	վաճառեցի	foruxtim→bofruxtem	վաճառեցինք
2-րդ ղեմք	foruxti→bofruxti	վաճառեցիր	foruxtid→bofruxtei	վաճառեցիք
3-րդ ղեմք	foruxt→bofrux	վաճառեց	foruxtand→bofruxtan	վաճառեցին

Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքում անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ ղեմքը, ի տարբերություն գրական պարսկերենի, որտեղ բայը ղիմային վերջավորություն չի ընդունում, ստանում է *-ek* վերջավորությունը³:

	Պարսկերեն Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածք	հայերեն	Պարսկերեն Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածք	հայերեն
	Եզակի թիվ		Հոգևակի թիվ	
1-ին ղեմք	raftam→raftom	Գնացի	raftim→raftem	գնացինք
2-րդ ղեմք	rafti→rafti	Գնացիր	raftid→raften	գնացիք
3-րդ ղեմք	raft→raft (ek)	Գնաց	raftand→raftan	գնացին

Մաշհադի խոսվածքում անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ ղեմքում, ի տարբերություն գրական պարսկերենի, որտեղ բայը ղիմային վերջավորություն չի ընդունում, ստանում է *-eg* վերջավորությունը⁴:

	Պարսկերեն Մաշհադի խոսվածք	հայերեն	Պարսկերեն Մաշհադի խոսվածք	հայերեն
--	------------------------------	---------	------------------------------	---------

² Zomoradiān R., 1368 (1989), Barresi guyeš-e Qāyen; Āstān-e Qods-e Razavī; 89

³ Mehrabi A., 1374 (1995) "Description of Turbatian Dialect", Tarbiat Modares University, Tehrān, 102

⁴ Nejatian H., 1390 (2011), Barresi va towsif-e guyeš-e Mašhad, Danešgāh-e Ferdowsi Mašhad, 107.

	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
1-ին դեմք	goftam→goftom	ասացի	goftim→goftem	ասացինք
2-րդ դեմք	gofti→gofti	ասացիր	goftid→goften	ասացիք
3-րդ դեմք	goft→gofteg	ասաց	goftand→goftan	ասացին

Քաշմարի խոսվածքում եզակի թվի երրորդ դեմքում բայը ոչ միայն դիմային վերջավորություն չի ստանում, այլև անցյալի հիմքում հնչյունի անկում է տեղի ունենում³:

	Պարսկերեն Քաշմարի խոսվածք	հայերեն	Պարսկերեն Քաշմարի խոսվածք	հայերեն
	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
1-ին դեմք	bordam→bordom	տարա	bordim→bordem	տարանք
2-րդ դեմք	bordi→bordi	տարար	bordid→borden	տարարք
3-րդ դեմք	bord→bor	տարավ	bordand→bordan	տարան

Այսպիսով, Խորասանի Բարբառի անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմությունը, համեմատելով զրական պարսկերենի հետ, նկատում ենք, որ վերոնշյալ խոսվածքներում անցյալ կատարյալ ժամանակաձևի համար կիրառվող դիմային վերջավորությունները գործածվում են հնչյունափոխված տարբերակով:

Այսպես, Թորբաթ-է շեյդարիեի և Մաշհադի խոսվածքներում եզակի թվի երրորդ դեմքը համապատասխանաբար ստանում է -ek և -eg վերջավորությունները, մնացյալ խոսվածքներում երրորդ դեմքը վերջավորություն չի ստանում, իսկ որոշների դեպքում՝ հնչյունի անկում է տեղի ունենում:

Բոլոր խոսվածքների եզակի և հոգնակի թվերի առաջին և երրորդ դեմքերը համապատասխանաբար կազմվում են -om, -em և -an վերջավորություններով՝ բացառությամբ Ֆերդոուսի խոսվածքում գործածվող որոշ բայերի, որոնց դեպքում հոգնակի թվի երրորդ դեմքը ստանում է -a դիմային վերջավորությունը:

Ղայենի խոսվածքում հոգնակի թվի երկրորդ դեմքում -en-ի փոխարեն բայը ստանում է -ei, իսկ Ֆերդոուսի խոսվածքում -a դիմային վերջավորությունը: Իսկ եզակի թվի երկրորդ դեմքը, բացի Ֆերդոուսի

³ Eshaqi E., 1379 (2000), Barresi va towsif-e guyeš-e Kašmar: Danešgah-e Ferdowsi Mašhad: 110

խոսվածքից, որտեղ որոշ բայեր ստանում են -et վերջավորությունը, բոլոր խոսվածքներում ընդունում է -i դիմային վերջավորությունը:

Բացի վերը նշված քերականական շեղումներից և դիմային վերջավորություններում կատարված հնչյունափոխությունից, ուսումնասիրության առարկա խոսվածքներում անցյալ կատարյալ ժամանակի կազմության ժամանակ բայերը ենթարկվում են նաև այլ հնչյունական փոփոխությունների:

Գրական պարսկերենի **na-** ժխտական նախամասնիկը խորասանի բարբառում գործածվում է **ne-** հնչյունափոխված տարբերակով: (*հմմտ*՝ պրսկ. **nagoft** → իրս. բրբռ. **negofteg** - «չասաց»)

Խորասանի բարբառում ներկա-ապառնի ժամանակով գործածվող բայերի վերջին վանկի [a] կարճ ձայնավորն անցյալ կատարյալ ժամանակում դառնում է [o]: (*հմմտ*՝ իրս. բրբռ. **memanom** - «մնում եմ» → **mondom** - «մնացի»)

Խորասանի բարբառում գործածվող **setāndan** - «վերցնել», «գրավել» բայն անցյալ կատարյալ ժամանակում գործածելիս բայահիմքին ավելանում է **es-** նախամասնիկը: (*հմմտ*՝ իրս. բրբռ. **mestanom** - «գրավում եմ» → **estondom** - «գրավեցի»)

Որոշ բայերի դեպքում ներկայի հիմքի **v** բաղաձայնը անցյալ կատարյալ ժամանակում փոխվում է **f**-ի: (*հմմտ*՝ իրս. բրբռ. **mošnovom** - «լսում եմ» → **šonofom** - «լսեցի»)

Օգտագործված գրականություն

1. Rāqebī M.H. 1381(2002), Barresi va towsif-e guyeše Ferdows, Dānešgāh-e Ferdowsi Mašhad
2. Eshaqī E. 1379 (2000), Barresi va towsif-e guyeš-e Kāsmar, Dānešgāh-e Ferdowsi Mašhad
3. Zomoradian R. 1368 (1989), Barresi guyeš-e Qayen: Āstān-e Qods-e Razavi
4. Mehrābi A. 1374 (1995), "Description of Turbatian Dialect", Tarbiat Modarress Universriy, Tehrān
5. Nejātīān H. 1390 (2011), Barresi va towsif-e guyeš-e Mašhad, Dānešgāh-e Ferdowsi

ARMEN ISRAELYAN - "PAST PERFECT IN KHORASAN DIALECT"

The following article studies the formation of past perfect in Ferdows, Torbat-e Heydorie, Mashad, Chayen and Kamshar dialects that are spread in Khosran region of Iran.

The article is also aimed at comparing the phonetic and grammatical changes in these dialects with the literary Persian